Մկրտիչյան Ա. Շ.
Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների
ամբիոնի դասախոս
Էլ. փոստ՝ anna.mkrtchyan@ysu.am

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

Բանալի բառեր - *տեղեկատվական-քարոզչական գործողություններ, տեղեկատվական հակապայքար, տեղեկատվական քարոզչություն, հայ-ադրբեջանական հակամարտություն, հայաստանյան մամուլ*

1991 թվականից հայաստանյան տեղեկատվական տիրույթը նոր իրավիճակում հայտնվեց: ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակումով որակապես նոր բովանդակություն ստացավ լրատվական դաշտը: Մասնավորապես մամուլի բովանդակային վերակառուցումը մեծ չափով պայմանավորված էր նաև այն տեղեկատվական-քարոզչական գործողություններով, որոնք զուգահեռաբար ընթանում էին թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում: Ավելին՝ նման գործողություններն իրականացվում էին յուրահատուկ մեթոդներով՝ ներքին և արտաքին լսարանների համար հստակ տարբերակմամբ:

1. Տեղեկատվությունից մինչև քարոզչություն

«Տեղեկատվական գործողություն» հասկացությունը մշակվել է «տեղեկատվական պատերազմ» եզրույթի հետ միաժամանակ 1976թ. ամերիկյան «ՌԵՆԴ» «ուղեղային կենտրոնում» Թոմաս Ռոնի կողմից և ժամանակակից ձև, բովանդակություն ու եզրաբանություն ստացել 1991թ. իրաքյան առաջին պատերազմի ընթացքում: Ավելի ուշ՝ 1998թ., ԱՄՆ պաշտպանության նախարարությունը շրջանառության մեջ դրեց «Տեղեկատվական գործողությունների

միացյալ դոկտրին» փաստաթուղթը, որում «տեղեկատվական գործողություն» և «տեղեկատվական պատերազմ» հասկացություններին տրվեցին հետևյալ սահմանումները.

- Տեղեկատվական գործողությունը ձեռնարկվում է հակառակորդի տեղեկատվական համակարգերի կողմից տեղեկատվության հավաքման, մշակման, փոխանցման և պահպանման գործընթացը խաթարելու նպատակով՝ միևնույն ժամանակ պահպանելով սեփական տեղեկատվությունը և տեղեկատվական համակարգերը:
- Տեղեկատվական պատերազմը համալիր ներգործություն է (տեղեկատվական գործողությունների համախմբի միջոցով) հակառակորդի պետական համակարգի և նրա ռազմական, քաղաքական ղեկավարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղեկատվական պատերազմ իրագործողի համար հակառակորդի կողմից նպաստավոր որոշումներ ընդունելուն, իսկ հակամարտության ընթացքում լիովին կարող է կաթվածահար անել հակառակորդի կառավարման ենթակառուցվածքների գործունեությունը[1]:

Ղարաբաղյան շարժման տարիներին, մասնավորապես, երբ շարժումը թևակոխեց պատերազմական փուլ, հակամարտող երկրների մամուլը հստակ նպատակներ ուներ: Տեղեկատվական գործառույթին գումարվել էր քարոզչականը, որն իրականացվում էր տեղեկատվական պայքարի տարբեր մեթոդներով՝ ճշմարտությունը խեղաթյուրելուց մինչև կեսճշմարտության տարածում՝ այդ կերպ փորձելով լսարանի վրա ազդել գլխավորապես հոգեբանական առումով: Այդ ժամանակաշրջանի հայաստանյան մամուլի քննությունն ակնհայտորեն վեր է հանում տեղեկատվական հակապայքարի մի ողջ համակարգ, որ ծավալվում է հակառակորդ երկրների միջև: Ընդ որում՝ ադրբեջանական հակահայկական տեղեկատվա-

[1] Տե՛ս «Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը», խմբ.՝ Հարությունյան Գ., Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2009, էջ 10-11:

կան և հոգեբանական գործողությունների դեմ հայկական մամուլը հակազդելու ռազմավարություն իրականացնողի դերում էր:

Տեղեկատվական հակապայքարը պատերազմ է առանց ճակատային գծի, իսկ տեղեկատվական պատերազմների բազմաթիվ գործողությունների իրականացման գործընթացը գործնականորեն անհնար է բացահայտել. եթե նույնիսկ այդպիսի փաստեր նկատվում են, դրանք ամենայն հավանականությամբ մնում են անանուն[2]: Գոյություն չունեն տեղեկատվական պատերազմի իրականացման միջազգային, իրավական և բարոյական նորմեր[3]: Տեղեկատվական հակապայքարը համակարգերի՝ մեկը մյուսի վրա բաց և/կամ գաղտնի կերպով նպատակաուղղված տեղեկատվական ազդեցությունն է:

2. Մամուլը որպես ազդեցության գործոն

1991-1994 թթ. իրականացվող տեղեկատվական քաղաքականության նպատակները հայաստանյան մամուլում համակարգված չէին, մինչդեռ Ադրբեջանի համար դրանք հստակ էին: Մասնավորապես ադրբեջանական մամուլը «հայ անջատողականների» և «ագրեսորների» դեմ պայքարում հանրային կարծիքը համախմբելու դերակատարում էր ստանձնել, ավելին՝ հասարակական գիտակցության մեջ ներդնում էր մոտալուտ հաղթանակի անխուսափելիության գաղափարներ[4]:

Հայաստանյան մամուլը ուսումնասիրվող ժամանակաշրջանում տեղեկատվական պայքարի էր դուրս եկել առանց հստակ գործիքակազմի, ուստի պատահական չէ, որ ՀՀ և ԼՂՀ տեղեկատվական-քարոզչական աշխատանքը համակարգված չէր (ադրբեջանական քարոզչամեքենայի դեմ հակազդեցության անհամապատաս-

---

[2] **Ղալեչյան Ա.,** Տեղեկատվական հակապայքարի էությունը և առանձնահատկությունները, 25.12.2014, Եր., http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=13078

[3] http://5ballov.qip.ru/

[4] Տե՛ս «Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը», Եր., «Նորավանք», ԳԿՀ, խմբ. Հարությունյան Գ., էջ 22:

խանություն, սեփական շահերի ոչ լիարժեք պաշտպանություն, ադրբեջանական տեղեկատվական հոսքերի թերի գնահատում, տեղային և հեռանկարային հակահարվածների իրականացման նախաձեռնողականության պակաս): Ընդ որում՝ դրանում ներգրավված էին ընդամենը մի քանի լրատվամիջոցներ, լրագրող ու մտավորական: Թեև Հայաստանում մամուլը մեծ լիցքեր ստացավ հենց արցախյան ազատագրական շարժումից, սակայն ղարաբաղյան հակամարտության շուրջ տարվող տեղեկատվական քաղաքականությունը լիարժեքորեն չէր համապատասխանում ստեղծված իրավիճակի պահանջներին: Ավելին՝ ղարաբաղյան հակամարտության շուրջ տարվող հայկական տեղեկատվական-քարոզչական աշխատանքը եղել և հիմնականում շարունակում է լինել ռեակտիվ (արձագանքող), որի պայմաններում պրոակտիվ (հարձակողական) կողմ են մնում Ադրբեջանն ու ադրբեջանամետ սուբյեկտները: Իսկ Ադրբեջանի տեղեկատվաքարոզչական համակարգը ներառում էր մի քանի սուբյեկտներ՝

- պետական քաղաքական մարմիններ (պետական իշխանության մարմիններ),
- պետական գիտահետազոտական կազմակերպություններ (Գիտությունների ազգային ակադեմիա, համալսարանական հանրություն),
- ոչ պետական կազմակերպություններ, հիմնադրամներ, վերլուծական կենտրոններ,
- անհատական նախաձեռնություններ (առանձին անհատ նախաձեռնողներ՝ մտավորականներ, փորձագետներ, զինվորականներ և այլք)[5]:

Ղարաբաղյան շարժման սկզբից ևեթ հանդես գալով հայկական կողմի պահանջատիրությունը չեզոքացնելու և հակառակ պահանջատիրություն ներկայացնելու ուղղությամբ՝ ադրբեջանական կողմի գործողություններն այս ոլորտում անընդհատ որոշակի փո-

[5] Տե՛ս **Աբանեսյան Ա.,** Համացանցը որպես ԼՂՀ ազգային անվտանգության տեղեկատվական պաշտպանության հարթակ, «21-րդ դար», Եր., 2013, թիվ 6 (52), էջ 40-42:

խակերպումների էին ենթարկվում՝ տարբեր փուլերում ներառելով տարբեր գործողություններ ու քայլեր՝ սկսած Արցախում հայերի բնակեցման, պատմության և կարգավիճակի շուրջ ապատեղեկատվության տարածումից մինչև հակահայկական տրամադրությունների բորբոքում, հայկական մշակութային ժառանգության ադրբեջանականացում կամ դրանց ոչնչացում, Հայաստանը նախահարձակ երկիր ներկայացնելուն միտված քարոզչական աշխատանքների իրականացում և այլն[6*]: Ըստ էության, ադրբեջանական կողմն իրականացնում էր հատուկ մշակված տեղեկատվական գործողություններ՝ հոգեբանական ներգործության մեթոդների կիրառմամբ*:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ադրբեջանական քարոզչության կարևորագույն բաղադրիչներից են հայ ժողովրդի պատմության զեղծումները, պատմական, նյութական և մշակութային արժեքների ոչնչացումը, դրանց նախապատմության կեղծումը, «արհեստածին և գիտականորեն չհիմնավորված տեսակետների առաջքաշումը և դրանց հիմնավորման համար այլազգի վարձու հեղինակների ներգրավումը»[7], հայաստանյան մամուլը (ընդ որում՝ լրագրողներից շատ ավելի ակտիվ և հետևողական մտավորականները) ղարաբաղյան շարժման սկզբից ի վեր առանձնահատուկ ձևով շեշտադրում է հենց Արցախի պատմական պատկանելության հարցը: Սա թերևս առանցքային է այդ շրջանի մամուլի հրապարակումներում: Այս առումով տեղեկատվական առճակատման են դուրս գալիս ժամանակի մտավորականները: Մասնավորապես

---

[6] Տե՛ս **Դեմոյան Հ.,** Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ Ադրբեջանի քարոզչության նախապատմությունը և հակահայ քարոզչության ելակետերը, «Տարածաշրջան» տեղեկագրի հատուկ թողարկում (Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ), Եր., 2005, էջ 55:

* Ներկայումս ադրբեջանական կողմի քարոզչական ակտիվությունն այլ ելակետեր է ներառում՝ Հայաստանն նախահարձակ երկիր ներկայացնելուց, ղարաբաղյան հակամարտությունը տարածաշրջանի կայունությունը վտանգող գործոնի քարոզումից մինչև հակերային հարձակումներ:

* Հոգեբանական գործողություններում հատուկ կարևորություն է ձեռք բերում հոգևոր և բարոյական արժեքների, պետական, ազգային և պատմական խորհրդանիշերի արժեզրկումը:

[7] Տե՛ս **Դեմոյան Հ.,** նշվ. աշխ., էջ 58:

Պերճ Զեյթունցյանի հրապարակումներում դա առավելապես դրսևորվում է հայոց պատմության անցյալի հերոսների և նրանց գործի արժևորմամբ. «Անգնահատելի է հայ հերոսների ներդրումը հայի լինելիության գործում»[8]: Երկրամասի պատմության ակունքներում մեր նախնիների ծավալած ազատագրական կռիվների մասին խոսելիս Զորի Բալայանն էլ ընդգծում էր «հայության կյանքում ազգային-ազատագրական շարժումների բացառիկ կարևոր դերը»[9]: Իսկ Վարդգես Պետրոսյանը, իբրև պատմական պատկանելության վկայություն, Լեռնային Ղարաբաղի 1611 հայկական հուշարձանների գոյության հարցն է հնչեցնում, որոնք բարբարոսաբար «ավերվել ու դանդաղ ավերվում են ադրբեջանցիների կողմից»[10]: Գրողին խիստ մտահոգում էին հայկական բազմադարյա մշակույթի կորստյան վտանգը և այդ համատեքստում հայոց պատմության ադրբեջանական «սրբագրման» փորձերը: Վ. Պետրոսյանն ընդգծում էր այն հանգամանքը, որ հայկական պատմամշակութային ժառանգության և հայկական խորհրդանիշների հանդեպ ադրբեջանական ոտնձգությունները տեղի էին ունեցել շատ ավելի վաղ: Թե՛ մշակութային, թե՛ այլ առումներով հակահայկականության դրսևորումներն Ադրբեջանում հաստատուն տեղ ունեին դեռ շարժումից էլ առաջ[11]: Հաշվի առնելով Ադրբեջանում հայատյաց քաղաքականության ձևավորման նախադրյալներն ու բնութագրական գծերը՝ Սիլվա Կապուտիկյանի հրապարակախոսական հոդվածներում անցյալի պատմական շեշտադրումներն իրենց տեղը զիջում են հայ ժողովրդի հավերժության գաղափարի հանդեպ ունեցած հավատի, ներքին մեծ ուժի, մաքառումների շեշտադրումներին:

Նշյալ խնդրի ներկայացման հարցում մի փոքր այլ մոտեցում ուներ Արմեն Հովհաննիսյանը: Այդ առումով հատկանշական է նրա հրապարակախոսական շեշտադրումը պատմական արժեքավոր

---

[8] «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր), Պրակ ԺԲ, Եր., 2012, էջ 15:
[9] «Ավանգարդ», Եր., 29 սեպտեմբերի, 1989:
[10] «Հայրենիքի ձայն», Եր., 2 նոյեմբերի, 1988:
[11] Տե՛ս **Դեմոյան Հ.,** նշվ. աշխ.:

փաստաթղթերի, վկայությունների, սկզբնաղբյուրներից արված մեջբերումների վրա: Հովհաննիսյանը վստահ էր, որ «ազերբայջանական մամուլում և ոչինչ «պատահաբար» չի տպագրվում»:

Ըստ էության, հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերի դեմ պայքարի էին դուրս եկել հայ մտավորականները, որոնք իրենց փաստարկված արձագանքներով կարևոր աշխատանք էին կատարում:

Հայաստանի և Արցախի համար ծանր ու վճռական շրջան էր 1992 թվականը: Տարեսկզբից՝ հունվարի 10-ից, Ստեփանակերտը կրակի տակ էր. «ապրում էր նկուղներում», լայնածավալ հարձակումների էր ենթարկվում ողջ Արցախը, գիշերներն անցնում էին զանգվածային հրետանակոծության պայմաններում, ամեն օր նոր զոհերի անուններ էին հրապարակվում: Դժվարություններ հաղթահարելու առաջ էր կանգնած նաև հայաստանյան մամուլը թե՛ բովանդակային, թե՛ տարածման առումներով: Մամուլում Արցախից ստացվող լուրերը քանակական առումով ավելացան, բայց բովանդակային տեսանկյունից շարունակում էին մնալ նույնը. դրանք հիմնականում արտատպումներ էին արևմտյան լրատվամիջոցներից, նաև «Արմենպրես», երբեմն «Նոյյան տապան» լրատվական գործակալությունների հաղորդագրություններն էին: Այդ առումով ընդդիմադիր մամուլի տեղեկատվության աղբյուրների շրջանակն ընդլայնվում էր, ոչ միայն գրում էին թերթի սեփական կամ հատուկ թղթակիցները, այլև տեղեկություններ էին տպագրվում տարբեր տեղեկատու կենտրոններից, «Ինտերֆաքս», «Սնարք», «Ռոյթեր» լրատվական գործակալություններից, միջազգային հեղինակավոր պարբերականներից և այլն: Իբրև հակակշիռ պաշտոնական մամուլին՝ ընդդիմադիրն ահազանգում էր երկրում ստեղծված տագնապալի իրավիճակի մասին՝ ստեղծելով «Արցախ» մշտական խորագիրը, որն ուներ իր գրեթե անփոփոխ և կայուն տեղը թերթի լրատվական տարածքում: Ավելին՝ ներկայացվում էին ոչ միայն տեղեկատվական, երբեմն վերլուծական նյութեր, այլև լուսանկարներ ու գրական գործեր՝ հայրենասիրական բանաստեղծություններ, համառոտ ակնարկներ ու մենագրություններ, որոնք առնչվում էին դա-

բաբաղյան հիմնահարցին ու շարժման դասերին: Նման հրապարակումները, եթե դրանք, օրինակ, վերաբերում էին Հաղբութի և Մարտունու դիրքերի հրետակոծությանը, որպես կանոն, առանձնանում էին յուրահատուկ ոգով և պայքարի ու հաղթանակի մղող ուժով: Այդպես էր Խոջալուի ազատագրման, Հողեր և Քարինտակ գյուղերի պաշտպանությունների ժամանակ:

1992թ. փետրվար-մարտ ամիսներին Լեռնային Ղարաբաղի հարցը միջազգայնացվեց: Քաղաքական նման իրավիճակով պայմանավորված՝ լրատվական անդրադարձները «քաղաքական հորձանուտում» հայտնված Ադրբեջանի մասին էին և Հայաստանի ու Արցախի «սահմաններում անորոշ հանգստության» ու «խախտվող անդորրի»:

Հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում մամուլը ներկայացնում էր նաև ԼՂՀ տարբեր շրջաններում գտնվող հայկական պատմական հուշարձանները, զրույցի հրավիրում մասնագետների (հուշարձանագետ Սամվել Կարապետյան և ուրիշներ), մտահոգություն հնչեցնում, թե «Արցախում և հանրապետությունում տեղի ունեցող տագնապալի իրադարձությունների մասին հեռուստալրատվությունը ճշմարիտ տեղեկություններ չի տալիս»[12] և այլն, մինչդեռ «մեր սահմաններում հայրենասիրության, պատվի և ուժի փորձություն էր»[13]:

Թեև «հայ-ադրբեջանական լրատվական պատերազմը նոր փուլ թևակոխեց»[14], սակայն, ըստ էության, հստակորեն չուրվագծվեց հայաստանյան տեղեկատվական քաղաքականությունը: Խոսքն այս դեպքում 1992-ի մայիսին Շուշիի և Լաչինի ազատագրման մասին է: (Շուշիի ազատագրման՝ որպես պատերազմի ընթացքում ամենապայծառ օրվա մասին հայաստանյան տեղեկատվական տիրույթում խոսվեց միայն տարիներ անց): Հաղթական տրամադրության տարածումը՝ իբրև տեղեկատվական-քարոզչական գործողություն, այդ շրջանի մամուլը չիրականացրեց:

---

[12] «Ազատամարտ», Եր., 19-25 հունիս, 1992, թիվ 25:
[13] «Ավանգարդ», Եր., 20 մայիսի, 1993:
[14] «Ազատամարտ», Եր., 15 ապրիլի, 1992:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողությունները վերածվեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի:

Արտահայտվելու ազատության հաստատումը, որն առաջնային նշանակություն ուներ գաղափարական պայքարում, պայմանավորեց մամուլի բովանդակային վերակառուցումը: Փոխակերպումներն ընթանում էին աստիճանաբար[15], քանի որ անկախ Հայաստանի մամուլը լուրջ փորձություն էր հաղթահարում: Նախանշվող զինադադարի վերաբերյալ մամուլը գրեց, թե «այսքան մոտ մենք երբեք չենք եղել խաղաղությանը»[16], թեև այդպես էլ չկարողացավ «խաղաղություն» բառը վերնագիր դարձնել ու ավետել լիակատար խաղաղության մասին: Հարաբերական հանգիստը պահպանվում էր, բայց սահմանին կրակոցներ հնչում էին[17] և շարունակում են հնչել:

Հայկական և ադրբեջանական կողմերի միջև 1994թ. հրադադարի կնքումից սկսած՝ տեղեկատվական քաղաքականությունը, մնալով կոնֆլիկտային հաղորդակցման տրամաբանության շրջանակներում, մտավ նոր՝ հետպատերազմյան շրջան՝ մարտավարության այլ կանոններով:

---

[15] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Եր., 6 մայիսի, 1994:
[16] «Հայաստանի Հանրապետություն», Եր., 19 մայիսի, 1994:
[17] «Ազգ», Եր., 18 մայիսի, 1994, «Հայաստանի Հանրապետություն», Եր., 24 մայիսի, 1994:

РЕЗЮМЕ

Мкртичян А. Ш.

ИНФОРМАЦИОННО-ПРОПАГАНДИСТСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКОЙ ПРЕССЕ ВО ВРЕМЕНА КАРАБАХСКОЙ ВОЙНЫ

Ключевые слова: *информационно-пропагандистская деятельность, информационная антитеза, информационная пропаганда, армяно-азербайджанский конфликт, армянская пресса*

Во время Карабахского движения, в частности, когда движение вступило в период войны, у СМИ обеих сторон были четкие цели. Информационной функции добавилось и функция пропаганды, которая была проведена различными методами борьбы - от искажения истины до распространения половины истины, пытаясь таким образом повлиять на аудиторию, в основном на эмоционально-психологическом уровне.

Цели информационной политики армянской прессы были не систематизированы, но они были ясны азербайджанской прессе.

SUMMARY

Mkrtichyan A. Sh.

INFORMATIONAL-PROPAGANDA ACTIVITIES IN THE ARMENIAN PRESS DURING THE DAYS OF THE KARABAKH WAR

Key words: *informational-propaganda activities, informational antithesis, informational propaganda, conflict between Armenia and Azerbaijan, armenian press*

During the Karabakh movement, particularly when the movement entered a period of the war, the media of both countries had clear goals. To the informative function was added the function of propaganda, which was carried out by various methods of struggle, to distort the truth and to cover the half-truth, thus trying to influence the audience mainly emotional-psychological terms.

Information policy objectives of the armenian press would not systematized, but it was clear for the press of Azerbaijan.